ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0077, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26

«23» 06 2009 թ.

№ Ղ-993

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան,

Ի պատասխան Ձեր 2009 թվականի հունիսի 9-ի թիվ 02/23.3/3401-09 գրության՝ Ձեզ ենք ուղարկում «Հայաստանի Հանրապետության Նախագահի 2001 թվականի հուլիսի 20-ի ՆՀ-896 հրամանագրում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության եզրակացությունը:

Առդիր՝ 1 էջ:

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
010-8675
24 06 09

Ա. Հովհաննիսյան

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի ՆՀ-896 ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ՀՐԱՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության Նախագահի 2001 թվականի հուլիսի 20-ի ՆՀ-896 հրամանագրում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ Նախագահի հրամանագրի նախագծի վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ առաջարկությունները.

1. Նախագծի 1-ին կետի կապակցությամբ առաջարկում ենք ՀՀ Նախագահի 2001 թվականի հուլիսի 20-ի ՆՀ-896 հրամանագրի 2-րդ կետի նոր շարադրանքի փոխարեն «ինն» բառը փոխարինել «տասնհինգ» բառով,
2. Նախագծի 2-րդ կետն անհրաժեշտ է խմբագրել, հաշվի առնելով, որ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ կետի նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ կարող են մտնել ոչ շուտ, քան պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ

Ա. ԹՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Գ. Առաքելյան